Vardan Atoyan

To cite this version:

Vardan Atoyan. . AMBERD Bulletin, 2020. hal-03261290v2

HAL Id: hal-03261290

https://hal.science/hal-03261290v2

Submitted on 20 Sep 2021

HAL is a multi-disciplinary open access archive for the deposit and dissemination of scientific research documents, whether they are published or not. The documents may come from teaching and research institutions in France or abroad, or from public or private research centers.

L'archive ouverte pluridisciplinaire **HAL**, est destinée au dépôt et à la diffusion de documents scientifiques de niveau recherche, publiés ou non, émanant des établissements d'enseignement et de recherche français ou étrangers, des laboratoires publics ou privés.

ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՎՐԱ ՀԻՄՆՎԱԾ ՈՒՂԵՂԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԸ

Հիմնաբառեր. *ժառանգության վրա հիմնված ուղեղային կենտրոններ, հանրային քաղաքականություն, Ջիմի Քարտեր, արտերի կենտրոն, քաղաքական մշակույթ, երկրորդ շավիղի դիվանագիտություն*

Վարդան ԱԹՈՅԱՆ

Քաղաքական գիտությունների դոկտոր, դոցենտ

2002 թ. ավարտել է ԵրՊՏԻ-ն (այժմ՝ ՀՊՏՀ), 2010 թ.՝ ԵԽ քաղաքական դասընթացների երևանյան դպրոցը, 2015 թ.՝ ՀՀ ԱԳՆ դիվանագիտական դպրոցը: 2004 թ.-ին ստացել է գիտությունների թեկնածուի, 2018 թ.՝ դոկտորի գիտական աստիճան: 2018 թ.-ից առայսօր ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի տնօրենի տեղակալ-ավագ փորձագետ է: 2012 թ.-ից մինչ օրս դասավանդում է ՀՊՏՀ իրավագիտության և քաղաքագիտության ամբիոնում: Ամերիկյան քաղաքական գիտության ասոցիացիայի (ք. Վաշինգտոն) և Ռուսաստանի քաղաքական գիտության ասոցիացիայի (ք. Մոսկվա) անդամ է: Հեղինակ է 60-ից ավելի գիտական հրապարակումների:

ORCID ID: https://orcid.org/0000-0002-4974-0312

Հոդվածը նվիրված է ուղեղային կենտրոնների տիպաբանական մոդելների շարքում առանձնահատուկ տեղ զբաղեցնող և պետությունների պաշտոնաթող ղեկավարների կողմից ստեղծվող՝ ժառանգության վրա հիմնված ուղեղային կենտրոնների էության, ինչպես նաև հանրային քաղաքականության մեջ դրանց նշանակության ու դերակատարության վերլուծությանը: Քննարկվում են նման կենտրոնների առաքելությունը, նպատակներն ու գործունեության հիմնական ուղղությունները: Որպես տիպային մոդելի օրինակ՝ առավել համակողմանի անդրադարձ է կատարվում ԱՄՆ նախկին նախագահ Ջիմի Քարտերի՝ 1982 թվականին ստեղծած համանուն կենտրոնի գործունեությանը:

Ներածություն

Վերջին տասնամյակները մշտապես ուղեկցվել են ուղեղային կենտրոնների (think tanks) քանակական աճով և հանրային քաղաքականությունում վերջիններիս դերակատարության ու ազդեցության աստիճանական մեծացմամբ: Այնուամենայնիվ, տարբեր երկրներում ուղեղային կենտրոնների ոլորտն անցել է զարգացման տարբեր ճանապարհ և ունի հասունության ոչ միանման մակարդակ: Ուստի, հաճախ ձևավորվել են առավելապես տեղական քաղաքական մշակույթին բնորոշ ուղեղային կենտրոնների տիպաբանական մոդելներ: Դրանց շարքում առանձնահատուկ տեղ են զբաղեցնում ժառանգության վրա հիմնված ուղեղային կենտրոնները, որոնց դերակատարությանն առնչվող հարցերի քննարկմանն էլ նվիրված է այս հոդվածը: Հատկանշական է, որ վերոնշյալ տիպաբանական մոդելին պատկանող ուղեղային կենտրոնները հանրային քաղաքականությունում

ունեն ուրույն գործառնական դերակատարություն և ակադեմիական գրականության մեջ առավել քիչ ուսումնասիրվածներից են: Այս առումով, սույն հետազոտությունը, հատկապես հայրենական քաղաքագիտական գրականության համատեքստում, կարող է համարվել հարցի առավել հանգամանալից ներկայացման առաջին փորձը:

Հարկ է նշել, որ իր ավելի քան հարյուրամյա պատմության ընթացքում ուղեղային կենտրոնների ոլորտն անցել է զարգացման մի շարք փուլեր: Այդ փուլերից յուրաքանչյուրին բնորոշ են եղել որոշակի առանձնահատկություն, ուղղվածություն և առաքելություն ունեցող ուղեղային կենտրոնների ստեղծումն ու դերակատարության արդիականացումը: Հաշվի առնելով այն, որ հեղինակի՝ 2019 թ. հրապարակած աշխատությունում[1] համակողմանի կերպով հետազոտվել են թե՛ ուղեղային կենտրոնների ոլորտի գենեզիսն ու էվոլյուցիան, թե՛ յուրաքանչյուր ժամանակաշրջանին բնորոշ ուղեղային կենտրոնների ստեղծումն ու դրանց գործառնական առանձնահատկությունները, այս հոդվածի շրջանակում անդրադարձ կկատարվի միայն խնդրո առարկա տիպային մոդելին դասվող ուղեղային կենտրոններին առնչվող որոշ հարցերի:

Վերլուծություն

Ուղեղային կենտրոնների ոլորտի զարգացման մակարդակի և դերակատարության նշանակալիության վրա մեծապես ազդում են մի շարք գործոններ, որոնցից հարկ է առանձնացնել տեղական քաղաքական մշակույթի առանձնահատկությունները, այդ թվում՝ հանրային քաղաքականության բացության աստիճանը, ուղեղային կենտրոնների հետ փոխգործակցության հարցում քաղաքական վերնախավերի նախաձեռնողականությունը, ոլորտը կարգավորող օրենսդրությունը, հանրային քաղաքականության սուբյեկտների միջև ավանդույթի ուժով ձևավորված փոխհարաբերությունների ձևաչափը, ինչպես նաև երկրի համախառն հզորությունը, արտաքին քաղաքական հավակնությունները և այլն: Թերևս, հենց այդ է պատճառը, որ ներկայում տարբեր երկրներում ոլորտը զարգացման էականորեն տարբեր մակարդակներում է, ինչն արտահայտվում է նաև համապատասխան ուղեղային կենտրոնների տիպաբանական բնութագրիչների և տիպային բազմազանության վրա:

Ոլորտի ուսումնասիրությունը վկայում է, որ որքան նպաստավոր են տվյալ երկրի պայմաններն ուղեղային կենտրոնների ոլորտի զարգացման համար, այդքան վերջիններիս տիպաբանական կառուցվածքն առավել հարուստ է ու բազմազան: Պատահական չէ, որ այս հաստատությունները սկզբնապես զարգացել են Արևմուտքում (հատկապես՝ ԱՄՆ-ում), որտեղ առկա էին և ցայսօր առկա են ոլորտի առաջընթացի համար անհամեմատ նպաստավոր պայմաններ: Այսպես՝ նախորդ դարի 80-90-ական թվականներին ուղեղային կենտրոնների ոլորտում սկսեցին հայտնվել ծագումնաբանական առումով նոր մոդելի կառույցներ, որոնք ակադեմիական գրականությունում ստացան ժառանգության վրա հիմնված ուղեղային կենտրոններ (Legacy-based Think Tanks) անվանումը: Նման հաստատություններ ստեղծում էին պետությունների պաշտոնաթող առաջին դեմքերը կամ նախկին բարձրաստիճան պաշտոնյաները՝ թեկուզ և երբեմն տարբեր շեշտադրումներով, սակայն գլխավորապես հետապնդելով հետևյալ նպատակները.

1. փորձագիտական, վերլուծական կառույցի միջոցով շարունակել ինստիտուցիոնալ դերակատարություն և որոշակի ազդեցություն ունենալ հանրային քաղաքականության ու քաղաքական խոսույթի վրա,

2. հանրային քաղաքականության այլ սուբյեկտների հետ հարաբերություններում և լայն հասարակական շրջանակներում շարունակել առաջ մղել այն գաղափարները, համոզմունքները, սկզբունքներն ու արժեքային կողմնորոշիչները, որոնք իրենց պաշտոնավարման ընթացքում վարվող քաղաքականության ուղե-

[1] Տես Աթոյան Վ. (2019), *Ուղեղային կենտրոններ. ռազմավարական գաղափարների դարբնոցները*, Եր., «Զանգակ» հրատ., 216 էջ:

նիշներ էին,

3. անձնական փորձով, կապերով, ուղեղային կենտրոնի մտավոր ու կազմակերպական ռեսուրսներով և նման հաստատություններին բնորոշ գործառույթների իրականացմամբ, այդ թվում՝ երկրորդ շավիղի դիվանագիտության (Track II Diplomacy) գործիքակազմի օգնությամբ շարունակել ծառայել ազգային շահերի պաշտպանությանը և նպաստել երկրի առջև ծառացած և/կամ միջազգային նշանակության որոշակի հիմնախնդիրների լուծմանը,

4. քաղաքականության և այլ ոլորտների ապագա առաջնորդներին փոխանցել սեփական փորձն ու գիտելիքները,

5. ամփոփել և համակարգված կերպով լայն հանրությանն ու վերլուծաբանական համայնքին ներկայացնել պաշտոնավարման տարիներին մշակված ու իրականացված քաղաքականության արդյունքներն ու դրանց նշանակությունը՝ երկրի պատմական հոլովույթի համատեքստում:

Տեղին է նշել, որ ուղեղային կենտրոնների կողմից ավանդաբար իրականացվող երեք հենասյունային՝ հետազոտական, հաղորդակցային և կրթական գործառույթները լիովին բավարարում են վերոնշյալ նպատակների իրականացումը: Ինչպես ճշմարտացիորեն նկատում է ուղեղային կենտրոնների ոլորտի ճանաչված հետազոտող Դոնալդ Աբելսոնը, այդ հաստատությունների գործունեության շրջանակը բավական լայն է. նրանք անցկացնում են սեմինարներ և աշխատաժողովներ, իրականացնում քաղաքականության տարբեր ոլորտներին առնչվող հետազոտություններ[2]: Միաժամանակ, ուղեղային կենտրոնների լայն գործիքակազմը թույլ է տալիս փաստիացիորեն ակտիվ քաղաքականությունից դուրս և արդեն առավել ազատ կարգավիճակով շարունակել դերակատարություն ունենալ հանրային քաղաքականությունում՝ անձնական փորձը, գիտելիքները, կապերն ու ռեսուրսները ծառայեցնելով հանրային կամ համաշխարհային նշանակության հիմնախնդիրների լուծմանն ու երկրի շահերին: Ուղեղային կենտրոնների մեկ այլ հայտնի հետազոտող Ջեյմս ՄաքԳանի պատկերավոր դիտարկմամբ՝ նման ուղեղային կենտրոններ ստեղծում են կարևոր անհատները, օրինակ՝ նախկին նախագահները, որոնք փորձում են հիմնարար ժառանգություն թողնել արտաքին և ներքին քաղաքականությունում[3]: Հավելենք, որ, սովորաբար, նման հաստատությունները շարունակում են իրենց գործունեությունն ու առաքելությունը նաև հիմնադիրների մահից հետո:

Հաշվի առնելով նման հաստատությունների հիմնադիրների քաղաքական հետագիծը (երկրի ղեկավարները հաճախ անդամակցում են որևիցե կուսակցության), որոշակի գաղափարայնությունը և քաղաքականությանն առնչվող որոշ հարցերի նկատմամբ ընդգծված հետևողականությունը՝ ոլորտի հետազոտողները նման ուղեղային կենտրոնները, որպես կանոն, դասում են շահապաշտպան հաստատությունների տեսակին[4]: Այնուամենայնիվ, պետք է ընդգծել, որ ուղեղային կենտրոնների ստեղծման պարագայում հիմնադիրների մոտեցումը հաճախ այլ է լինում, և դրանք ձևավորվում են ապակուսակցական և ապաքաղաքական կառույցների ձևաչափով: Այս մոտեցումը հնարավորություն է տալիս նման ուղեղային կենտրոններին իրենց հրապարակումներում և գործունեության մեջ որոշակիորեն պահպանելու մասնագիտական օբյեկտիվությունն ու անաչառությունը՝ տարբեր գործընթացներում հանդես գալով առավել անկախ դիրքերից: Բնական է՝ վերջիններս, պայմանավորված հիմնադրի քաղաքական հայացքներով, որդեգրած արժեքներով, տարբեր երևույթների նկատմամբ ձևավորած մոտեցումներով, հաճախ կարող են ունենալ որոշակի գաղափարախոսական ընդհանրություններ այլ քաղաքական կառույցների հետ: Այնուամենայնիվ, որպես կանոն, ժառան-

[2] Abelson, Donald E. (2006). *A Capitol Idea: Think Tanks and US Foreign Policy.* Canada: McGill Queen's University Press, p. 10.

[3] McGann, James. (2016). *The Fifth Estate: Think Tanks, Public Policy and Governance.* Washington D.C.: Brookings Institution Press. P. 8.

[4] Рич Э., Уивер К., Пропагандисты и аналитики: «мозговые центры» и политизация экспертов. *Pro et contra,* т. 8, N 2, М., 2003, с. 64-89.

գության վրա հիմնված ուղեղային կենտրոնները խուսափում են քաղաքական որևիցե կառույցի հետ ուղղակի փոխկապվածությունից:

Տիպաբանական այս մոդելի հաստատություններն ունեն ևս մեկ առանձնահատկություն՝ ըստ որի տարբերվում են դասական ուղեղային կենտրոններից: Ի տարբերություն ավանդական ուղեղային կենտրոնների, որոնք իրենց գործառույթների շարքում, սովորաբար, շեշտադրում են հետազոտական և վերլուծական բաղադրիչները, տիպաբանական այս մոդելին դասվող հաստատությունները առավել միտված են պրակտիկ գործունեությանը և տարատեսակ նախագծերի իրականացմանը: Ակադեմիական անգլալեզու եզրաբանությամբ՝ այդպիսի ուղեղային կենտրոնները կարելի է բնորոշել որպես think-and-do tanks[5]: Հստակություն մտցնելու համար նշենք, որ այստեղ խոսքն ամենևին էլ հետազոտական, վերլուծական գործառույթների անտեսման մասին չէ, այլ սեփական առաջնահերթություններն ու նախապատվությունները սահմանելու:

Ժառանգության վրա հիմնված ուղեղային կենտրոնների օրինակներ են 1982 թ. ԱՄՆ 39-րդ նախագահ Ջ. Քարտերի՝ Էմորի համալսարանի հետ համագործակցության արդյունքում հիմնադրած *The Carter Center-ը* (որի գործունեությանը հաջորդիվ առավել մանրամասնորեն կանդրադառնանք) և 1994 թ. ԱՄՆ 37-րդ նախագահ Ռ. Նիքսոնի հիմնադրած *The Center for the National Interest* հաստատությունները: Վերջինս նախկինում կոչվում էր Հանուն խաղաղության և ազատության Ռ. Նիքսոնի կենտրոն: Հետխորհրդային տարածքում նման կառույց կարելի է համարել 1991 թ. դեկտեմբերին ԽՍՀՄ վերջին ղեկավարի ստեղծած Սոցիալ-տնտեսական և քաղաքագիտական հետազոտությունների միջազգային հիմնադրամը, որն առավել հայտնի է որպես «Գորբաչովի հիմնադրամ»: Այդ հաստատությունը կարելի է մատնանշել որպես հետխորհրդային տարածքում տիպաբանական այս մոդելին դասվող առաջին ուղեղային կենտրոն:

Վերոնշյալի համատեքստում պետք է նշել, որ Հայաստանում երկրի պաշտոնաթող նախագահների կողմից նման կառույցի ստեղծման նախադեպ դեռևս չի արձանագրվել[6]: Երկրի երեք նախկին նախագահներից ոչ մեկն այդ ձևաչափով հաստատություն չի հիմնել: Գրեթե նույնը կարելի է ասել նաև նախկին վարչապետների պարագայում: Այս առումով, թերևս, կարելի է մատնանշել ՀՀ նախկին վարչապետ Տիգրան Սարգսյանի՝ 2014 թ. հիմնադրած, սակայն այդպես էլ հանրային քաղաքականությունում ակտիվությամբ չառանձնացած և ներկայում, ըստ էության, չգործող՝ «Հասարակության հետազոտությունների հայկական կենտրոն» հիմնադրամը: Ինչ վերաբերում է նախկին նախարարներին, ապա այստեղ հարկ է առանձնացնել ՀՀ առաջին արտգործնախարար Ռաֆֆի Հովհաննիսյանի՝ 1994 թ. հիմնադրած Ռազմավարական և ազգային հետազոտությունների հայկական կենտրոնը: Թեև վերջինս շատ ավելի ակտիվ և նկատելի գործունեություն էր ծավալում ստեղծման առաջին տարիներին, սակայն կառույցը գործում է ցայսօր և լիովին կարող է համարվել Հայաստանում ժառանգության վրա հիմնված առաջին ուղեղային կենտրոնը:

Տիպաբանական այս մոդելին պատկանող ուղեղային կենտրոնների էությունն ու դերակատարությունն առավել հանգամանալից կերպով ներկայացնելու նկատառումներից ելնելով՝ փորձենք մի փոքր ավելի մանրամասնորեն անդրադառնալ, թերևս, դրանցից ամենահաջողվածներից մեկի գործունեությանը: Եվ այսպես՝ պաշտոնաթողությունից մոտ մեկ տարի անց՝ 1982 թ., ԱՄՆ նախկին նախագահ Ջիմի Քարտերը հիմնադրեց իր անունը կրող կենտրոն, որտեղ ներկայում աշխատում են ավելի քան երկու տասնյակ փորձագետներ: Հատկանշական է, որ նրանց թվում է նաև իրավաբանական գիտու-

[5] Encyclopædia Britannica, Think Tank, Retrieved August 17, 2020, https://www.britannica.com/topic/think-tank

[6] Հայաստանի ուղեղային կենտրոնների մասին տես Atoyan, V. (2017). Some features of Armenian think tank industry. *European Science Review,* 3-4, 87-89; Atoyan, V. (2017). Armenian Think Tanks influence aspects on Public Policy. *European Journal of Law and Political Sciences,* 2, 59-62:

թյունների դոկտոր, հայազգի Հրայր Բալյանը, որը զբաղեցնում է կենտրոնի հակամարտությունների կարգավորման տնօրենի պաշտոնը[7]: 2020 թ. հունիսից կենտրոնի գործադիր տնօրենն է Փեյջ Ալեքսանդրը, որն այդ պաշտոնում փոխարինել է դիվանագետ, Բանգլադեշում ԱՄՆ նախկին դեսպան Մարի Էն Փեթերսին: Մինչ այդ՝ Փեյջ Ալեքսանդրը Բրյուսելում տեղակայված՝ Գյուղական շրջանների զարգացման եվրոպական կոոպերատիվի (EUCORD) գործադիր տնօրենն էր: Արդեն 1987 թ. ստեղծվել է Քարտերի կենտրոնի խորհրդատուների խորհուրդը, որը գործում է որպես հաստատության խորհրդատվական մարմին: Դրա հիմնական նպատակն է Քարտերի կենտրոնի գործունեությանն աջակցությունը և հասարակական կարծիքի առաջատարների շրջանում հաստատության առաքելության վերաբերյալ իրազեկվածության աստիճանի բարձրացումը: Խորհրդի անդամների հանդիպումները կազմակերպվում են եռամսյակային պարբերականությամբ: Խորհուրդն ունի 200-ից ավելի անդամներ, որոնց թվում՝ գործարար ազդեցիկ շրջանակների ներկայացուցիչներ: Հատկանշական է, որ Ջորջիայի նահանգապետը, Ատլանտայի քաղաքապետը և Էվորի համալսարանի նախագահն ի պաշտոնե խորհրդի անդամներ են: Խորհրդի անդամներն ընտրվում են երեք տարի ժամկետով: Միաժամանակ, Քարտերի կենտրոնին կայուն և նշանակալի աջակցություն ցուցաբերող և մեծ ներդրում ունեցող անդամներին տրվում է խորհրդատուների խորհրդի ցկյանս անդամի կարգավիճակ: 2020 թ. փետրվարից խորհուրդը ղեկավարում է *BlueLinx Corporation*-ի գործադիր տնօրեն Շիամ Ռեդին:

1994 թ. ստեղծվել է նաև Քարտերի կենտրոնի հոգաբարձուների խորհուրդը՝ որպես կառավարման մարմին, որն աջակցում է կենտրոնի առաքելության իրականացմանը և լիազորված է որոշելու հաստատության գործունության ուղղությունները, կառավարելու վերջինիս ակտիվները: Հոգաբարձուների խորհրդի անդամներին նշանակում են Քարտերի կենտրոնը և Էմորի համալսարանը, որի նախագահն ի պաշտոնե այդ խորհրդի անդամ է: Մինչև 2005 թ.՝ հոգաբարձուների խորհուրդը ղեկավարում էր անձամբ նախագահ Քարտերը: Նույն թվականին այդ պաշտոնում նրան փոխարինել է իր թոռը՝ Ջորջիա նահանգի Սենատի նախկին անդամ Ջեյսոն Քարտերը:

Հարկ է նշել, որ կենտրոնը տիրապետում է նշանակալից ռեսուրսների՝ ծավալելով բավական լայն աշխարհագրական ընդգրկմամբ գործունեություն: Այս համատեքստում, տեղին է նշել, որ հաստատության 2019 թ. բյուջեի եկամտային մասը կազմել է ավելի քան 265 մլն ԱՄՆ դոլար, որից շուրջ 212 մլն-ը ձևավորվել է նվիրատվություններից և դրամաշնորհներից[8]: Քարտերի կենտրոնի գործունեության հիմնական ուղղություններն են մարդու իրավունքների պաշտպանությունը, հակամարտությունների կանխարգելումն ու կարգավորումը, ազատությունների և ժողովրդավարության ամրապնդումն ու հանրային առողջապահության հիմնահարցերը: Գործունեության շուրջ չորս տասնամյակի ընթացքում Քարտերի կենտրոնը խաղաղության առաջմղման, հիվանդությունների դեմ պայքարի, մարդու իրավունքների, տնտեսական հնարավորությունների ստեղծման և գյուղատնտեսական ոլորտի աջակցման ծրագրեր է իրականացրել աշխարհի ավելի քան 80 երկրում: Կենտրոնի աջակցությամբ աֆրիկյան պետություններում որոշ ծանր հիվանդությունների դեպքերը նվազել են ընդհուպ 99,9%-ով: Աֆրիկայի հազարավոր համայնքներում ստեղծվել են բուժօգնության տրամադրման համակարգեր, որոնք ներկայում սովորեցնում են բժշկական անձնակազմին և կամավորներին՝ ինչպես իրականացնել դեղորայքային մատակարարում և սանիտարական ուսուցում: Միաժամանակ, կենտրոնն աջակցել է խաղաղության հաստատմանը Եթովպիայում, Էրիթրեայում, Լիբերիայում, Սուդանում, Հարավային Սուդանում,

[7] Carter Center Experts, Retrieved 10 August, 2020, https://www.cartercenter.org/about/experts/index.html
[8] The Carter Center. *Annual Report 2019,* p. 78, Retrieved 10 August, 2020, https://www.cartercenter.org/resources/pdfs/news/annual_reports/annual-report-19.pdf

Ուգանդայում, Բոսնիա և Հերցեգովինայում, Կորեական թերակղզում, Հաիթիում և Մերձավոր Արևելքում: Բացի այդ, Ասիայի, Աֆրիկայի, Հյուսիսային և Հարավային Ամերիկայի 39 երկրում անցկացված ընտրություններում Քարտերի կենտրոնն իրականացրել է 111 դիտորդական առաքելություն՝ աջակցելով ժողովրդավարության հաստատմանն ու ամրապնդմանը[9]:

Կարևոր է նշել նաև Քարտերի կենտրոնի՝ երկրորդ շավիղի դիվանագիտության ոլորտում ունեցած արդյունավետ դերակատարության մասին: Բազմաթիվ օրինակներից նշենք, թերևս, ամենանշանակալին: Այսպես՝ 1994 թ. հունիսին ԱՄՆ նախկին նախագահ Քարտերը և նրա կինը՝ Ռոզալինը, առաջինն էին, որ հատեցին Հյուսիսային Կորեայի և Հարավային Կորեայի ապառազմականացված գոտին: Ընդ որում, այդ ժամանակ Հյուսիսային Կորեայի կամ Կորեայի Ժողովրդադեմոկրատական Հանրապետության (ԿԺԴՀ) միջուկային ծրագրի պատճառով միջազգային իրադրությունը չափազանց լարված էր: ԿԺԴՀ-ն դադարեցրել էր անդամակցությունը Ատոմային էներգիայի միջազգային գործակալությանը (ԱԷՄԳ) և սպառնում էր արտաքսել ԱԷՄԳ տեսչական խմբի անդամներին: Միաժամանակ, ԱՄՆ-ը ՄԱԿ-ում պահանջում էր պատժամիջոցներ կիրառել Հյուսիսային Կորեայի նկատմամբ: Ստանալով ԿԺԴՀ առաջնորդ Կիմ Իր Սենի հրավերը՝ Ջիմի Քարտերը, որպես Քարտերի կենտրոնի ներկայացուցիչ, անմիջապես մեկնեց Փհենյան՝ նպատակ ունենալով հանգուցալուծելու միջազգային անվտանգությանը սպառնացող թնջուկը: Երկօրյա բանակցությունների արդյունքում, ԱՄՆ-ի հետ երկխոսության վերսկսման դիմաց, նախագահ Կիմը համաձայնեց սառեցնել միջուկային ծրագիրը: Բանակցային այս հաջողությունը հիմք դրեց նախորդող 40 տարիների ընթացքում ԱՄՆ-ի և ԿԺԴՀ-ի միջև առաջին երկխոսությանը: Հետագա բանակցությունները հանգեցրին 1994 թ. հոկտեմբերին և 1995 թ. հունիսին հաստատված երկու համաձայնության, որոնց արդյունքում ԿԺԴՀ-ն համաձայնեց չվերաթողարկել իր միջուկային ռեակտորը և չվերամշակել կայանի օգտագործած միջուկային վառելիքը: Շինարարությունը կասեցվել էր նաև երկու լրացուցիչ կայաններում, և բոլոր երեքը պետք է փոխարինվեին առավել անվտանգ թեթևջրային ռեակտորներով՝ զենքի համար նախատեսված համապատասխան որակի նյութերի արտադրությունը կանխելու նպատակով[10]:

Հավելենք նաև, որ Քարտերի կենտրոնը հրապարակում է Carter Center News պաշտոնական ամսագիրը, տարաբնույթ զեկույցներ, վերլուծական հոդվածներ, ինչպես նաև նախագահ Քարտերի գործունեությանն առնչվող աշխատություններ: Եզրափակելով Քարտերի կենտրոնի գործունեության ներկայացումը՝ նշենք ևս մեկ նշանակալից փաստ. 2008 թ. Փենսիլվանիայի համալսարանի ուղեղային կենտրոնների և քաղաքացիական հասարակությունների ծրագրի իրականացրած վարկանշավորման արդյունքներով՝ ԱՄՆ լավագույն ուղեղային կենտրոնների շարքում Քարտերի կենտրոնը զբաղեցրել էր մինչ այդ պահը պատմականորեն ամենաբարձր՝ 18-րդ հորիզոնականը[11]: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ այդ պահի դրությամբ ԱՄՆ-ում գործում էին 1777 ուղեղային կենտրոններ, վարկանշային աղյուսակում նման բարձր դիրք զբաղեցնելը վկայում է հանրային քաղաքականությունում Քարտերի կենտրոնի նշանակալից դերակատարության և տարբեր գործընթացների վրա նկատելի ազդեցության մասին:

Ամփոփում և եզրակացություններ

Այսպիսով՝ կարող ենք ասել, որ ժառանգության վրա հիմնված ուղեղային կենտրոնները ուրույն և հաճախ նշանակալի դերակատարություն ունեն հանրային քաղաքականությունում: Քարտերի կենտրո-

[9] Encyclopædia Britannica, Think Tank, Retrieved August 17, 2020, https://www.britannica.com/topic/think-tank

[10] Հայաստանի ուղեղային կենտրոնների մասին տես Atoyan, V. (2017). Some features of Armenian think tank industry. *European Science Review,* 3-4, 87-89; Atoyan, V. (2017). Armenian Think Tanks influence aspects on Public Policy. *European Journal of Law and Political Sciences,* 2, 59-62:

[11] Think Tanks and Civil Societies Program (University of Pennsylvania) 2008 Global Go To Think Tanks Index Report, January 19, 2009, https://repository.upenn.edu/cgi/viewcontent.cgi?article=1000&context=think_tanks

նի մասնավոր օրինակով փորձեցինք առավել հանգամանալից կերպով ներկայացնել, թե որքան արդյունավետ կարող են գործել նման հաստատությունները, այդ թվում՝ համաշխարհային հիմնախնդիրների լուծման և տարատեսակ միջազգային ճգնաժամերի հաղթահարման գործում: Այս տեսանկյունից, նման կենտրոնների ստեղծման մշակույթի ձևավորումը կարող է օրինակելի լինել նաև Հայաստանի համար: Հասկանալի է՝ խոսքը մեր հնարավորություններին և ռեսուրսներին համահունչ՝ ժառանգության վրա հիմնված ուղեղային կենտրոնների ստեղծման մասին է, որոնց հիմնադրման հարցում վճռորոշ գործոն է պաշտոնաթող բարձրաստիճան անձանց նախաձեռնողականությունը:

Վերոնշյալի համատեքստում հարկ է հաշվի առնել նաև մեկ այլ կարևոր հանգամանք: Անկախության վերականգնման առաջին իսկ օրվանից Հայաստանը հայտնվել է բարդագույն խնդիրների լուծման և բազմաթիվ համաչափ ու անհամաչափ սպառնալիքներին դիմակայելու գործընթացում: Գաղտնիք չէ, որ այդ ամենը պայմանավորված է ներքին և արտաքին բազմաթիվ գործոններով, այդ թվում՝ Հարավային Կովկասում առկա անվտանգության խնդիրներով, Արցախյան չկարգավորված հակամարտությամբ, մասնակի շրջափակմամբ, հարևան որոշ երկրների թշնամական քաղաքականությամբ, համաշխարհային և տարածաշրջանային տերությունների աշխարհաքաղաքական հետաքրքրություններով, տարբեր ոլորտներում իրականացվող ինստիտուցիոնալ վերափոխումներով, ինչպես նաև պետական, քաղաքական, ժողովրդավարական ինստիտուտների կայացման, ժողովրդագրական մարտահրավերներին դիմակայման և շարունակվող սոցիալ-տնտեսական բարդ իրադրությունը հաղթահարելու առավել արդյունավետ ուղիների ընտրության անհրաժեշտությամբ: Առկա իրողություններում և վերոնշյալ խնդիրները արդյունավետորեն և մեր ազգային շահերին համապատասխան լուծելու գործում նախկին բարձրաստիճան պաշտոնյաների և, հատկապես, պետության նախկին ղեկավարների կուտակած ռեսուրսը, այդ թվում՝ ինստիտուցիոնալ հիշողությունը, միջազգային կապերը, բազմաթիվ տարիների կառավարման փորձն ու գիտելիքները լիարժեքորեն չօգտագործելը, կարծում ենք, չափազանց մեծ շռայլություն է սահմանափակ հնարավորություններով մեր երկրի համար: Միաժամանակ, Հայաստանում ժառանգության վրա հիմնված ուղեղային կենտրոնների ստեղծման մշակույթի ձևավորումը կարող է դրական ազդեցություն ունենալ հանրային քաղաքականության վրա, նոր թափ հաղորդել ուղեղային կենտրոնների ոլորտի զարգացմանը, ձևավորել առողջ քաղաքական երկխոսություն, հարստացնել փորձագիտական դաշտի ներկապնակը և լրացուցիչ հզորություն փոխանցել երկրի դիվանագիտությանը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աթոյան Վ. (2019), *Ուղեղային կենտրոններ. ռազմավարական գաղափարների դարբնոցները,* Եր., «Զանգակ» հրատ., 216 էջ:
2. Ռազմավարական և ազգային հետազոտությունների հայկական կենտրոն, մուտք՝ 12/08/2020, https://acnis.am/hy/
3. Международный фонд социально-экономических и политилогических исследований (Горбачев-Фонд), дата обращения: 02/08/2020, https://www.gorby.ru/
4. Рич Э., Уивер К., Пропагандисты и аналитики: «мозговые центры» и политизация экспертов. *Pro et contra*, т. 8, N 2, М., 2003, с. 64-89.
5. Abelson, Donald E. (2006). *A Capitol Idea: Think Tanks and US Foreign Policy.* Canada: McGill Queen's University Press.
6. Atoyan, V. (2017). Armenian Think Tanks influence aspects on Public Policy. *European Journal of Law and Political Sciences, 2,* 59-62.
7. Atoyan, V. (2017). Some features of Armenian think tank industry. *European Science Review, 3-4,* 87-89.
8. Encyclopædia Britannica, *Think Tank,* Retrieved August 17, 2020, https://www.britannica.com/topic/think-tank
9. McGann, James. (2016). *The Fifth Estate:*

Think Tanks, Public Policy and Governance. Washington D.C.: Brookings Institution Press.
10. The Carter Center, Retrieved 10 August, 2020, https://www.cartercenter.org/
11. The Center for the National Interest, Retrieved 5 August, 2020, https://cftni.org/
12. Think Tanks and Civil Societies Program (University of Pennsylvania). (2009). *2008 Global Go To Think Tanks Index Report,* Retrieved 16 August, 2020, https://repository.upenn.edu/cgi/viewcontent.cgi?article=1000&context=think_tanks

Вардан АТОЯН
Заместитель директора-старший эксперт исследовательского центра «Амберд», АГЭУ, доктор политических наук, доцент

ОБРАЗОВАНИЕ, ИННОВАЦИИ, ЗНАНИЯ

МОЗГОВЫЕ ЦЕНТРЫ, ОСНОВАННЫЕ НА НАСЛЕДИИ

Статья посвящена анализу основанных на наследии сущности мозговых центров, которые занимают особое место среди типологических моделей мозговых центров, а также их значению и роли в публичной политике. Обсуждаются миссия, цели и основные направления мозговых центров, которые создаются бывшими главами государств. В качестве примера типовой модели более подробно рассматривается деятельность созданного в 1982 году одноименного центра бывшего президента США Джимми Картера.

Ключевые слова: *мозговые центры, основанные на наследии, публичная политика, Джимми Картер, Центр Картера, политическая культура, дипломатия второго трека*

Vardan ATOYAN
Deputy Director & Senior Expert of «Amberd» Research Center, ASUE, Doctor of Sciences (Political Science), Associate Professor of Political Science

EDUCATION, INNOVATION, KNOWLEDGE

LEGACY-BASED THINK TANKS

The paper is devoted to the analysis of the essence of legacy-based think tanks, which hold a special position among the typological models of think tanks, as well as their significance and role in public policy. The mission, goals and main directions of think tanks, which are created by former heads of state, are discussed. As an example of a typical model, the activities of the Carter Center, founded in 1982 by former US President Jimmy Carter, are discussed in detail.

Keywords: *legacy-based think tanks, public policy, Jimmy Carter, the Carter center, political culture, track II diplomacy*